**Հաստատված է ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ**
**«_31_ »__08__ 2020 թ.-ի նիստում (արձ. թիվ 1):**
**Ամբիոնի պետ, ոստ. փոխգնդապետ**
**Ա. Հովհաննիսյան ……………………………**
**(ստորագրություն)**

**……………………………**
**(ամիս ամսաթիվ)**

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ**
**ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| **ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ** | | ՀՀ քրեական դատավարության իրավունք – 4 (առկա անվճար ուսուցում) |
| | | |
| **ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ** | | |
| | | |
| **ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | Իրավագիտություն |
| | | |
| **ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** | | Իրավագիտություն |
| | | |
| **ԱՄԲԻՈՆ** | | Քրեական դատավարության ամբիոն<br>E-mail: qrdatambion@mail.ru |
| | | |
| **ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ** | | Ա. Հովհաննիսյան (ի. գ. թ., դոցենտ)<br>E-mail: qrdatambion@mail.ru Հեռ.՝ +374 93000762 |
| | | |
| **ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ** | | 4-րդ կուրս, 1-ին կիսամյակ |
| | | |
| **ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ** | | բակալավր |

| | | |
|---|---|---|
| **ԿՐԵԴԻՏՆԵՐ** | | **3 (երեք)** |
| | | |
| **ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ** | | «ՀՀ քրեական դատավարության իրավունք – 4» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 16-ը՝ դասախոսություն, 10-ը՝ սեմինար, 6-ը՝ գործնական, 58-ը՝ ինքնուրույն աշխատանք:<br><br>Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացը գնահատվում է միջանկյալ քննությունների և եզրափակիչ քննության անցկացմամբ: |
| | | |
| **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ** | | Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն», «Իրավապահ մարմիններ», «ՀՀ |

| | | |
|---|---|---|
| | | սահմանադրական իրավունք», «ՀՀ քրեական իրավունք», «ՀՀ քրեական դատավարության իրավունք – 1», «ՀՀ քրեական դատավարության իրավունք – 2» և «ՀՀ քրեական դատավարության իրավունք – 3» դասընթացների իմացության վրա: |
| | | |
| ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ | | «ՀՀ քրեական դատավարության իրավունք – 4» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են վերաքննիչ և վճռաբեկ վարույթները, նոր և նոր երևան եկած հանգամանքների հետևանքով քրեական գործերի վերանայումը, առանձին ու հատուկ վարույթների կարգով քրեական գործերի դատական քննության առանձնահատկությունները, քրեական գործերով միջազգային-իրավական օգնության կարգը: |
| | | |
| ՆՊԱՏԱԿ/ԽՆԴԻՐՆԵՐ | | Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների պատրաստման, առանձին ու հատուկ վարույթների իրականացման պայմանների, քրեական գործերով միջազգային-իրավական օգնության կարգի վերաբերյալ:<br>Դասընթացի խնդիրներն են՝<br>1. ներկայացնել վերաքննիչ վարույթի հիմքերը, վերաքննիչ բողոքարկման սուբյեկտները և առարկան.<br>2. ներկայացնել վճռաբեկ վարույթի սուբյեկտներին, հիմքերը, գործերի քննության սահմանները<br>3. ներկայացնել նոր և նոր երևան եկած հանգամանքների հետևանքով քրեական գործերի վերանայման կարգը.<br>4. ներկայացնել առանձին ու հատուկ վարույթների կարգով քրեական գործերի դատական քննության առանձնահատկությունները,<br>5. ներկայացնել միջազգային-իրավական օգնության կարգով քրեական գործերի վարույթի ընթացքում դատավարական գործողություններ կատարելու մասին հանձնարարություններ տալու և հանձնման կարգը. |
| | | |
| ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ<br><br>*1. Կարողանա՝* | | 1. բացատրել վերաքննության հիմքերը և վերաքննիչ բողոքի առարկան, վերաքննիչ դատարանում գործերի քննության սահմանները, թվարկել վերաքննիչ բողոքարկման սուբյեկտներին և վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումները.<br>2. բացատրել վճռաբեկության կարգով դատական որոշումների բողոքարկման հիմքերը և վճռաբեկ բողոքի |

| | | |
|---|---|---|
| | | առարկան, վճռաբեկ դատարանում գործերի քննության սահմանները, թվարկել վճռաբեկ բողոքարկման սուբ-յեկտներին և վճռաբեկ դատարանի կողմից կայացվող որոշումները<br>3. սահմանել նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու հիմքերն ու ժամկետները, բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք, ձևակերպել նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցման և դատական ակտերի վերանայման կարգը.<br>4. թվարկել ու բացատրել անչափահասների գործերով ապացուցման ենթակա հանգամանքները, նախնական և դատական քննության առանձնահատկությունները.<br>5. թվարկել և բացատրել դիվանագիտական անձեռնմխելիության տեսակները.<br>6. թվարկել ու բացատրել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հիմքերը, վերարտադրել ու մեկնաբանել ԲԲՀՄ կիրառելու մինչդատական և դատական վարույթների առանձնահատ-կությունները, անմեղսունակ և դեպքից հետո հոգեկան հի-վանդությամբ հիվանդացած անձանց գործերով բացահայտ-ման ենթակա հանգամանքները, այդ գործերով պաշտպանի և օրինական ներկայացուցչի մասնակցությունը.<br>7. ձևակերպել ու բացատրել քրեական գործերով դատավարական գործողություններ կատարելու մասին հանձնարարություններ տալու կարգը, հանցագործություն կատարած անձի հանձնման կամ հանձնման մերժման հիմքերը և կարգը: |

| ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | | |
|---|---|---|
| **Հիմնական** | | 1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ): Մաս 2/ Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան. – Եր., Տիգրան Մեծ, 2017:<br>2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս. Երևան, Երևանի համալս. հրատ., 2010:<br>3. Уголовный процесс: учебник / под ред.: Божьев В.П. – 4-е изд., перераб. и доп. – М.: Спарк, 2004.<br>4. Уголовно-процессуальное право Российской Федерации: учебник / отв. ред. П.А. Лупинская. – М., 2011.<br>5. Уголовный процесс. Общая и Особенная части: учебник для юридических вузов и факультетов / под ред.: В.В. Вандышева – М.: Контракт, 2014.<br>6. Уголовно-процессуальное право: учебник для бакалавриата и магистратуры / под общ. ред.: В.М. Лебедева. – 2-е изд., пер. и доп. – М.: Издательство Юрайт, 2017. |
| **Լրացուցիչ** | | ***Թեմաներ 15-16.***<br>1. *Алиев Т.Т., Громов Н., Царева Н.* Дополнительные материалы в судах кассационной и надзорной инстанций. Российский судья. № 1, 2003.<br>2. *Божьев В.П.* Пределы прав суда кассационной инстанции. Законность. № 11, 2003.<br>3. *Демидов В.* Производство по уголовным делам в суде надзорной инстанции. Российская юстиция. № 3, 2003.<br>4. *Докина И.А.* К вопросу о применении нового УПК РФ в суде кассационной инстанции. Российский судья. № 2, 2003.<br>5. *Ковтун, Н.Н.* Порядок апелляционного обжалования приговора: монография. – *М., 2013.*<br>*6.* *Николаев, М.Ю.* Решение суда апелляционной инстанции по уголовным делам: учебное пособие. – М., 2013.<br>*7.* *Рукавишникова, А. А.* Производство в суде кассационной инстанции в системе проверки судебных решений в уголовном процессе России // Вестн. Том. гос. ун-та. Право. 2015. № 4 (18).<br><br>***Թեմա 17.***<br>1. *Ведищев, Н.П.* Возобновление производства по уголовному делу ввиду новых или вновь открывшихся обстоятельств: монография. / Н.П. Ведищев. – М., 2014.<br><br>***Թեմա 18.***<br>1. *Николюк, В.В.* Расследование и судебное разбирательство уголовных дел о преступлениях несовершеннолетних: учебное пособие / В.В. Николюк.– 2004.<br>2. *Трунова, Л.К.* Особенности применения мер уголовно- процессуального пресечения в отношении несовершеннолетних / Л.К. Трунова // Российский судья.– 2010.– № 10. |

3. *Игнатов С.Д.* Особенности процессуальной деятельности адвоката-защитника по делу несовершеннолетнего подсудимого в суде первой инстанции // Адвокатская практика. № 4, 2003.

**Թեմա 19.**

1. *Андреева Ю.С.* Особенности производства процессуальных действий в досудебном уголовном производстве в отношении иностранных лиц, пользующихся дипломатическим и консульским иммунитетами. Автореф. дис. ... канд. юрид. наук. – Люберцы, 2010.
2. *Андреева Ю.С.* Особенности возбуждения уголовных дел в отношении лиц, пользующихся иммунитетом от процессуальных действий в соответствии с общепризнанными принципами и нормами международного права и международными договорами РФ // Вестник Московского университета МВД России. - М.: Изд-во Моск. ун-та МВД России, 2009. № 11.
3. *Богаткина Р. Ш., Садыкова И. В.* Актуальные проблемы расследования уголовных дел с участием иностранных граж-дан и лиц, обладающих дипломатическим иммунитетом: теория и практика // Вестник Казанского юридического института МВД России. 2015. № 2 (20).
4. *Даев В. Г.* Иммунитеты в уголовно-процессуальной деятельности// Правоведение. 2012. № 3.
5. Руднев В.И. Иммунитеты от уголовного преследования // Журнал российского права. - М.: Норма, 1998, № 7.

**Թեմա 20.**

1. *Рыжаков, А.П.* Производство по применению принудительных мер медицинского характера: учебное пособие / А.П. Рыжаков.– М., 2013.
2. *Гельмель, В.Я.* Досудебное производство по уголовным делам о применении принудительных мер медицинского характера: учебно-практическое пособие / В.Я. Гельмель, В.Н. Майорчик, Е.Н. Петухов – Барнаул, 2010.

**Թեմա 21.**

1. *Калугин, А.Г.* Международное сотрудничество в сфере уголовного судопроизводства: вопросы теории и практики: учебное пособие / А.Г. Калугин, Д.В. Шинкевич. – Красноярск: СибЮИ МВД России, 2006.
2. *Калугин, А.Г.* Теоретические и практические проблемы оказания международной правовой помощи по уголовным делам: учебно-практическое пособие / А.Г. Калугин, Д.В. Шинкевич. – Красноярск: СибЮИ МВД России, 2006.
3. *Калугин, А.Г.* Особенности уголовно-процессуального доказывания при оказании международной правовой помощи по уголовным делам: учебное пособие / А.Г.Калугин, Д.В. Шинкевич. – Красноярск: СибЮИ МВД России, 2005.
4. *Шинкевич, Д.В.* Особенности доказывания по уголовным делам при оказании правовой помощи иностранными государствами: учебно-практическое пособие / Д.В. Шинкевич. – Красноярск: СибЮИ МВД России, 2006.

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ**

Բաղադրիչ 1- 20% (Միջանկյալ 1)
Բաղադրիչ 2- 20% (Միջանկյալ 2)
Բաղադրիչ 3- 60% (ամփոփիչ քննություն)

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ**

| Գնահատման արդյունարար միավոր | Գնահատականը տառանշումով | | |
|---|---|---|---|
| 18-20 | Գերազանց | Միջանկյալ գնահատման միավոր | |
| 13-17 | Լավ | Հարց 1 | Հարց 2 |
| 8-12 | Բավարար | 2 միավոր | 2 միավոր |
| 0-7 | Անբավարար | | |
| 0 | Չներկայացած | | |

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ**

Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն:

Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:

Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝

ա) «Գերազանց», եթե սովորողը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով.

բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների.

գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները.

դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:

| | | |
|---|---|---|
| ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին: |
| **Ներկայություն** | | Ուսանողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Ուսանողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը: |
| **Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ** | | Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր: |
| **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ** | | Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում:<br>Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում ուսանողը պարտավոր է նշել աղբյուրը՝ ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի: |

## ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

<table>
<tr><td colspan="2" align="center">Թեմա 15<br>Վարույթը վերաքննիչ դատարանում<br>(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 ժամ գործնական պարապմունք)</td></tr>
<tr><td align="center">Թեմայի հարցերը</td><td align="center">Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</td></tr>
<tr><td>1. Վերաքննիչ վարույթի հասկացությունը և նշանակությունը<br>2. Վերաքննիչ բողոքարկման առարկան, սուբյեկտները և ժամկետները<br>3. Վերաքննիչ բողոքի ձևը, բովանդակությունը և նշանակությունը<br>4. Վերաքննիչ բողոքարկման դատավարական կարգը<br>5. Վերաքննության հիմքերը<br>6. Վերաքննության կարգով բողոքի քննությունը<br>7. Վերաքննիչ վարույթի ավարտման եղանակները</td><td>Հարցեր 1-7՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>Հարցեր 1, 2, 4-6՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում:<br>Հարց 3՝ գործնական պարապմունք – վերաքննիչ բողոքի ձևաթղթի կազմում:<br>Հարցեր 3, 7՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:</td></tr>
</table>

<table>
<tr><td colspan="2" align="center">Թեմա 16<br>Վարույթը վճռաբեկ դատարանում<br>(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 ժամ գործնական պարապմունք)</td></tr>
<tr><td align="center">Թեմայի հարցերը</td><td align="center">Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</td></tr>
<tr><td>1. Վճռաբեկ վարույթի հասկացությունը և խնդիրները:<br>2. Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք, բողոքարկման հիմքերը և կարգը<br>3. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը<br>4. Վճռաբեկ դատարանում գործերի քննության կարգը<br>5. Վճռաբեկ վարույթի ավարտման արդյունքում կայացվող որոշումները</td><td>Հարցեր 1-5՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>Հարցեր 1, 2, 4՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում:<br>Հարցեր 3, 5՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները:</td></tr>
</table>

| **Թեմա 17**<br>Դատական ակտերի վերանայումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով<br>**(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման վարույթի հասկացությունը, նշանակությունը և խնդիրները: Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը.<br>2. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման հիմքերն ու ժամկետները, բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք.<br>3. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցումը: Դատախազի գործողություն-ները նոր երևան եկած հանգամանքների քննությունն ավարտելուց հետո.<br>4. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու բողոքները և դրանց ներկայացվող պահանջները: Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատական ակտերի վերանայման կարգը. | Հարցեր 1-4՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>Հարցեր 1-2՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում:<br>Հարցեր 3-4՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: |

| **Թեմա 18**<br>Անչափահասների գործերով վարույթի առանձնահատկությունները<br>**(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Անչափահասների գործերով վարույթի ընդհանուր բնութագիրը, ապացուցման ենթակա հանգամանքները.<br>2. Անչափահասների գործերով իրականացվող նախնական և դատական քննության առանձնահատ-կությունները. | **1.** Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>**2.** Հարցեր 1-2՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում:<br>**3.** Հարց 1-2՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: |

| Թեմա 19<br>Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձանց գործերով վարույթի առանձնահատկությունները<br>**(2 ժամ դասախոսություն)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Քրեական դատավարությունում դիվանագիտական անձեռնմխելիության հասկացությունը, սոցիալական նշանակությունը և էությունը:<br>2. Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձինք: Քրեական գործերով դիվանագիտական անձեռնմխելիության տեսակները: | **1.** Հարցեր 1-2՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>**2.** Հարց 1-2՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: |

| Թեմա 20<br>Անմեղսունակ անձանց և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթը<br>**(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 ժամ գործնական պարապմունք)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մինչդատական վարույթը<br>2. Անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու դատական վարույթը<br>3. Դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթը | **1.** Հարցեր 1-3՝ անցկացվում է դասախոսություն՝ ուսանողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>**2.** Հարցեր 1-3՝ սեմինար պարապմունք, խնդրահարույց հարցերի քննարկում:<br>**3.** Հարցեր 1-3՝ գործնական պարապմունք – բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի ընթացքում կայացվող դատավարական ակտերի ձևաթղթերի կազմում:<br>**4.** Հարց 1-3՝ ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը՝ այնուհետև սեմինար պարապմունքի ժամանակ քննարկվում են խնդրահարույց հարցերը, ստուգվում են ընթացիկ առաջադրանքները: |

**ՀԱՐՑԱՇԱՐ**

«ՀՀ քրեական դատավարության իրավունք - 4» առարկայի միջանկյալ 1-ին քննության

1. Վերաքննիչ վարույթի հասկացությունը և նշանակությունը
2. Վերաքննիչ բողոքարկման առարկան, սուբյեկտները և ժամկետները
3. Վերաքննիչ բողոքի ձևը, բովանդակությունը և նշանակությունը
4. Վերաքննիչ բողոքարկման դատավարական կարգը
5. Վերաքննության հիմքերը
6. Վերաքննության կարգով բողոքի քննությունը
7. Վերաքննիչ վարույթի ավարտման եղանակները
8. Վճռաբեկ վարույթի հասկացությունը և խնդիրները:
9. Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք, բողոքարկման հիմքերը և կարգը
10. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը
11. Վճռաբեկ դատարանում գործերի քննության կարգը
12. Վճռաբեկ վարույթի ավարտման արդյունքում կայացվող որոշումներըՆոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման վարույթի հասկացությունը, նշանակությունը և խնդիրները: Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը.
13. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման հիմքերն ու ժամկետները, բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք.
14. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցումը: Դատախազի գործողությունները նոր երևան եկած հանգամանքների քննությունն ավարտելուց հետո.
15. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու բողոքները և դրանց ներկայացվող պահանջները: Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատական ակտերի վերանայման կարգը

**ՀԱՐՑԱՇԱՐ**

«ՀՀ քրեական դատավարության իրավունք - 4» առարկայի
միջանկյալ 2-րդ քննության

1. Անչափահասների գործերով վարույթի ընդհանուր բնութագիրը:
2. Անչափահասների գործերով ապացուցման ենթակա հանգամանքները:
3. Անչափահասների գործերով իրականացվող նախնական և դատական քննության առանձնահատկությունները
4. Քրեական դատավարությունում դիվանագիտական անձեռնմխելիության հասկացությունը: Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձինք:
5. Քրեական գործերով դիվանագիտական անձեռնմխելիության տեսակները և դրանց բովանդակությունը:
6. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթի հասկացությունը և խնդիրները: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հիմքերը:
7. Անմեղսունակների և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց գործերով մինչդատական վարույթը և բացահայտման ենթակա հանգամանքները:
8. Անմեղսունակների և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց գործերով խափանման ու անվտանգության միջոցների կիրառման առանձնահատկությունները
9. Անմեղսունակների և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց գործի քննությունը դատարանում: Որոշում կայացնելիս դատարանի կողմից քննարկվող հարցերը:
10. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը վերացնելը կամ փոփոխելը

**ՀԱՐՑԱՇԱՐ**

«ՀՀ քրեական դատավարության իրավունք - 4» առարկայի ամփոփիչ քննության

1. Քրեական գործով վարույթի կասեցումը
2. Քրեական գործով վարույթի կարճումը և քրեական հետապնդման դադարեցումը
3. Մեղադրական եզրակացությամբ նախաքննության ավարտման դատավարական կարգը
4. Մեղադրական եզրակացության նշանակությունը, կառուցվածքը և բովանդակությունը
5. Դատարանի որոշմամբ կատարվող քննչական գործողությունները
6. Դատարանի որոշմամբ կիրառվող դատավարական հարկադրանքի միջոցները
7. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու դատավարական կարգի առանձնահատկությունները
8. Դատարանի որոշմամբ կիրառվող օպերատիվ-հետախուզական միջոցառումները
9. Հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների բողոքարկումը դատարան
10. Դատական քննության հասկացությունը, նշանակությունը և ընդհանուր պայմանները
11. Դատական քննության մրցակցային բնույթը և դատարանի կարգավիճակը
12. Դատական քննության մասնակիցները և նրանց չներկայանալու հետևանքները
13. Դատական քննության սահմանները
14. Դատական քննության ընթացքում ընդունվող դատական որոշումները
15. Դատական նիստի կարգը և դրա պահպանումը
16. Դատարանի կողմից կիրառվող սանկցիաները
17. Դատական նիստի արձանագրությունը
18. Դատական քննության կառուցվածքային մասերը
19. Դատական նիստի նախապատրաստական մասը
20. Դատաքննություն
21. Դատական վիճաբանությունները և ամբաստանյալի վերջին խոսքը
22. Դատական քննության արագացված կարգի կիրառման հիմքերը և պայմանները
23. Դատական քննության արագացված կարգով դատական քննություն անցկացնելու և դատավճիռ կայացնելու կարգը
24. Վերաքննիչ վարույթի հասկացությունը և նշանակությունը
25. Վերաքննիչ բողոքարկման առարկան, սուբյեկտները և ժամկետները
26. Վերաքննիչ բողոքի ձևը, բովանդակությունը և նշանակությունը
27. Վերաքննիչ բողոքարկման դատավարական կարգը
28. Վերաքննության հիմքերը
29. Վերաքննության կարգով բողոքի քննությունը
30. Վերաքննիչ վարույթի ավարտման եղանակները
31. Վճռաբեկ վարույթի հասկացությունը և խնդիրները:
32. Վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող անձինք, բողոքարկման հիմքերը և կարգը
33. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը
34. Վճռաբեկ դատարանում գործերի քննության կարգը
35. Վճռաբեկ վարույթի ավարտման արդյունքում կայացվող որոշումները

36. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման վարույթի հասկացությունը, նշանակությունը և խնդիրները: Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայող դատարանը.

37. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման հիմքերն ու ժամկետները, բողոք ներկայացնելու իրավունք ունեցող անձինք.

38. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով դատական ակտերի վերանայման վարույթի հարուցումը: Դատախազի գործողությունները նոր երևան եկած հանգամանքների քննությունն ավարտելուց հետո.

39. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու բողոքները և դրանց ներկայացվող պահանջները: Նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթով դատական ակտերի վերանայման կարգը

40. Անչափահասների գործերով վարույթի ընդհանուր բնութագիրը:

41. Անչափահասների գործերով ապացուցման ենթակա հանգամանքները:

42. Անչափահասների գործերով իրականացվող նախնական և դատական քննության առանձնահատկությունները

43. Քրեական դատավարությունում դիվանագիտական անձեռնմխելիության հասկացությունը: Դիվանագիտական անձեռնմխելիությունից օգտվող անձինք:

44. Քրեական գործերով դիվանագիտական անձեռնմխելիության տեսակները և դրանց բովանդակությունը:

45. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթի հասկացությունը և խնդիրները: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հիմքերը:

46. Անմեղսունակների և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց գործերով մինչդատական վարույթը և բացահայտման ենթակա հանգամանքները:

47. Անմեղսունակների և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց գործերով խափանման ու անվտանգության միջոցների կիրառման առանձնահատկությունները

48. Անմեղսունակների և դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց գործի քննությունը դատարանում: Որոշում կայացնելիս դատարանի կողմից քննարկվող հարցերը:

49. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցը վերացնելը կամ փոփոխելը